(1710-1715). Կ'ընտրուի պարք. 1715ին. կը հաստատուի պատրիարքութիւնը 1717ին. Ս. Յակոբի վանքին մեծաքանակ պարտուց վճարման համար երկաթէ շղթայ կ'անցընէ պարանոցը և կը կոչուի Շղթայակիր։ 1717ին Պոլսէն ղրկած իր արդիւնքներովը կը նորոգուի Ս. Յարութեան տաճարը. 1720ին միևնոյն ժամանակ կը նորոգուին նաև Հանդերձից բաժանման սեղանը, Իղոաբերից խորանը, Ս. Գերեզմանի գմբեթը։ Յոպպէի վանքին մօտ, երեք քարուկիր մաղտաներուն, փռան և խանուէխանէին գետինները նախապէս կը վերաբերէին Ս. Յակոբի վանքին. Բամի փաշան նոյն գետինները իւրացուցած և շէնքեր կառուցած էր. Գրիգոր պարք. անոր որդիներէն կը գնէ 1720ին նոյն շէնքերը և վագֆ կ'ընէ Ս. Յակոբի եւ կոնդակով մը, ՌՃԿԹ (=1720) թուին՝ այս պարագան Պոլսէն կը ծանուցանէ միաբանութեան։ 1720 ին կ'ուղեւորի Երուսաղէմ, Հալէպի եւ Դամասկոսի ճանապարհով. կը ժամանէ 1721 ին Երուսաղէմ, և իր ուղևորութեան առթիւ կը նորոգէ Հալէպի Հոգեւոր տունը, ըստ հետևեալ յիշատակարանի. (գետեղուած Հոգեւոր տան արեւելեան ճակատին վրայ). «Ի թվին ՌՃՀ (=1721) առաջնորդութեամբն Աստուծոյ, ես Գրիգոր . . . վարդապետս, պատրիարք Սբ. Երուսաղիմայ եկի ի քաղաքն Հալէպ, տեսի զՀոգեւոր տունս խաւարեալ և չինեալ ի Գրիգոր Պարոնտէրէ էր հնացեալ. Աստուծով նորոգեցի խցերօք եւ օդանեբօք, վերստին պայծառացեալ զարդարեցի յիշատակ ինձ և ծնողացն իմոց. և Յովհաննէս վարդապետն, պատրիարքն Բիւզանդիոյ, և բազմաչխատ զանձապետացն Երուսաղէմի և ազգս Հայոց և ամենայն ողորմութիւն տուողաց և որք ընթեռնուք ասացէք Աստուած ողորմի. ամէն»։ (Սիոն 1868. էջ 230-233)։ Այս առթիւ կը նորոգէ նաեւ Դամասկոսի եկեղեցին։ Ութը տարուան ընթացքին կը վճարէ հին պարտքերը և կ'սկսի վանական բարեկարգութեան, ընկերակցութեամբ իր մտերմին Յովհաննէս Կոլոտ պարք.ի։ Կարապետ կթղ. Զէյթունցի և Կոլոտ թախանձագին կը խնդրեն որ Գրիգոր պարք. շղթան հանէ պարանոցէն 1728ին. պարտքը վճարելէն եւ շղթան հանելէն վերջ միայն կը նստի Առաքելական Ս. Աթոռը 1728ին։ Շղթայակիր Պոլիս կը մեկնի Ս. Յակոբի խնդրոյն համար. 1736ին Շղթայակիր և Կոլոտ պատրիարքները եւ Յարութիւն ամիրայ Մուրատեան կ'ազատեն Ս. Յակոբի վանքը յոյներուն ոտնձգութիւններէն. 1737ին թղթակ-